19 նոյեմբերի 2024 թ

Արձանագրություն N 2

ՀՀԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների (Երևանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց,Երևանի թիվ 105ավագ դպրոց ,Երևանի թիվ112 ավագ դպրոց,Երևանի Ս.Խանզադյանի անվան թիվ 184 դպրոց ,Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց)

կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստ

/նիստը հրավիրվել է 2024 թվականի նոյեմբերի 19-ին/

Նիստին մասնակցել են
ՀՀԿԳՄՍ նախարարության ԿՁՆԱԿ հիմնադրամից խորհրդի նախագահ Լիլիթ Մկրտչյանը,
Երևանի քաղաքապետարանից Հասմիկ Իսոյանը,
բոլոր նշված դպրոցներից 2-ական ներկայացուցիչներ.
թիվ 112ավագ դպրոցից ուսուցիչ Աշխեն Ճահբազյանը,ծնող Մարիամ Զաքարյանը,
թիվ 184 ավագ դպրոցից ուսուցիչ Արև Միքայելյանը,ծնող Լուսինե Պողոսյանը ,
թիվ 190 ավագ դպրոցից ծնող Նազելի Ոսկանյանը ,
թիվ 105 ավագ դպրոցից ուսուցիչ Նարինե Միլիտոնյանը ,ծնող Մերի Քալանթարյանը
թիվ 92 հիմնական դպրոցից ուսուցիչ Գոհար Չոբանյանը,ծնող Լուսինե Մկրտչյանը:
Նիստից բացակայել են ԿԳՄՍ-ից Անի Խաչատրյանը և թիվ 190 դպրոցի ուսուցիչ Գոհար Բալեյանը
Սահմանված կարգի համաձայն՝ նիստը համարվել է իրավազոր:

Օրակարգում՝

1. Պետական բյուջեից տրամադրված կապիտալ դրամաշնորհի գումարի չափով ավելացման մասին հարցի քննարկում (զեկուցող՝ Վ.Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոցի տնօրեն Ծ.Մարդանյան)
2. Աշխատակարգի ներկայացում և հաստատում (հաղորդող՝ խորհրդի նախագահ Լիլիթ Մկրտչյան)

Կառավարման խորհրդի անդամները լսեց ին՝

1. Թիվ 92 հիմնական դպրոցի ուսուցիչ Գոհար Չոբանյանին, քանի որ թիվ 92 դպրոցի տնօրեն Ծ.Մարդանյանը վատառողջ լինելու պատճառով չէր կարողացել միանալ առցանց ժողովին և լիազորել էր ուսուցչուհուն ներկայացնելու խնդիրը:
Գոհար Չոբանյանը առաջարկեց քննարկել պետական բյուջեից տրամադրված կապիտալ դրամաշնորհի գումարի չափով ավելացման մասին հարցը, ասաց, որ դպրոցում առաջացել է ջեռուցման համակարգի պոմպերի խնդիր, և կարիք կա պետական բյուջեից պայմանագրով հաստատված 350000 դրամի նախահաշիվը հաստատելու:

Արտահայտվեց խորհրդի նախագահ Լիլիթ Մկրտչյանը: Վերջինս առաջարկեց, եթե հարցեր և առաջարկություններ չկան, քվեարկել հրատապ այդ խնդրի շուրջ:

Խորհրդի նիստին մասնակից 11 անդամները միաձայն քվեարկեցին կողմ:

2. Կառավարման կոլեգիալ մարմնի՝ խորհրդի նախագահը հանդես եկավ զեկուցումով և ներկայացրեց խորհրդի գործառույթների իրականացման ընթացակարգը՝ աշխատակարգը: Առավել հանգամանալից մեկնաբանեց խորհրդի նիստում հարցերը քննարկելու ընթացակարգը, հատկացված ժամաքանակը, քվեարկության ձևը:

Նշեց, որ օրակարգում ընդգրկված հացերի փաստաթղթերի նախագծերը խորհրդի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ պետք է ուղարկվեն խորհրդի անդամներին: Եթե որևէ հարցի մասով չի պահպանվել նշված ժամկետը, ապա հարցը հանվում է օրակարգից, և նոր օրակարգը դրվում է քվեարկության:
Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության մասին եզրակացությունը ստորագրվում է խորհդի նախագահի, քարտուղարի և անդամների կողմից: Առարկությունների դեպքում ստորագրության կողքին գրառում են <<Առարկությունը կցվում է>>: Եզրակացությունը և առարկությունները 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են տնօրենին:
Լ.Մկրտչյանը նշեց նաև, որ խորհրդի անդամները, կանոնակարգի համաձայն, պետք է իրականացնեն վերահսկողական գործառույթ, որի համար առաջարկվում է ձևավորել համակարգման երեք հանձնաժողովներ՝առկա խորհրդի, ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին խորհրդին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնելու և աջակցություն ցուցաբերելու:
Այս ամենի մասին օրենքի հղումը առցանց տարբերակով տրամադրվեց խորհրդի անդամներին՝ առավել հանգամանալից ուսումնասիրելու համար:

Լսելով ելույթ ունեցողներին՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլեգիալ կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ընդառաջ գնալով թիվ 92 դպրոցի առաջարկին՝ հաստատել պետական բյուջեից պայմանագրով հաստատված 350000 դրամի նախահաշիվը :
2. Ի գիտություն ընդունել խորհրդի գործառույթների իրականացման ընթացակարգը և հաստատել այն:

Կառավարման խորհրդի նախագահ՝ \ **Լ.Մկրտչյան** \

Քարտուղար՝ **Ա.Ճահիբազյան**\

Անդամներ՝ **Հ. Իսոյան**

Մ.Զաքարյան

Ա.Միքայելյան

Լ. Պողոսյան

Ն.Ոսկանյան

Ն.Միլիտոնյան

Գ.Չոբանյան

Մ.Քալանթարյան

Լ.Մկրտչյան